



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2018-2019 ուստարվա սկզբի հետ կապված հարցեր:
2. Ուսումնական ծանրաբեռնվածությունների գործընթացը ամբիոններում:
3. Մագիստրոսական ծրագրերի հաստատում:
4. Մասնագիտական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքը ֆակուլտետում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում նախ՝ շնորհավորեց ներկաներին ուսումնական նոր տարվա առիթով, ցանկացավ քաջառողջություն, գիտամանկավարժական բեղուն գործունեություն, ապա՝ տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 30-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ Բ. Գ. Թ., դոցենտ Արտաշես Մարգարյանին: Վերջինս մասնավորապես նկատեց, որ այս տարի զանազան կուրսերում առկա են որոշ փոփոխություններ՝ կապված ուսումնական, այսպես ասած, հին ու նոր ծրագրերի հետ: Դրանք սկզբնապես հարուցում էին որոշ դժվարություններ, սակայն ամեն ինչ արդեն կարգավորվել և հունի մեջ է ընկել:

Պրոֆ. Ա. Ավագյանն իր կողմից հավելեց, որ պատշաճ դիմավորվել են առաջինկուրսեցիները, ամենայն բարեխղճությամբ կազմվել ու փակցվել են դասացուցակները: Նա բոլոր ամբիոնների վարիչներին տեղեկացրեց, որ ուսումնական նոր տարին սկսվել է բնական հունով, և նրանցից ու դեկանատից պահանջեց ուսումնական գործընթացի նկատմամբ դրսևորել բարձր պատասխանատվություն և ջանադիր աշխատանք:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հայ բանասիրության ֆակուլտետի ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունների գործընթացին: Ամբիոնի վարիչները, առանց բացառությամբ, նկատեցին, որ այդ տեսակետից ստեղծվել է բավական ծանր կացություն, և հույս հայտնեցին, որ մոտ շրջանում ԵՊՀ ռեկտորատը կգտնի ուղիներ՝ ինչ-որ չափով մեղմելու ժամանակավոր առկա լարվածությունը:

Օրակարգի **3-րդ հարցի**՝ մագիստրոսական ծրագրերի հաստատման առիթով հնչեցին զանազան կարծիքներ, որոնց միավորում էր, սակայն, ընդհանուր մեկ նպատակ, այն է՝ ծրագրերում պահպանելով հանդերձ լավագույն ավանդները՝ ստեղծել ժամանակակից ոգուն համահունչ նորը:

Օրակարգի **4-րդ հարցը**՝ մասնագիտական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքը ֆակուլտետում, գիտական խորհրդում արժանացավ հատուկ ուշադրության: Պրոֆ. Ա. Ավագյանը հայտնեց, որ այս տարի առաջին անգամ փորձ է կատարվում հոկտեմբեր ամսից ներդնել մասնագիտական պրակտիկայի անցկացում մայրաքաղաքի գիտամշակութային զանազան հաստատություններում: Արդեն ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ համապատասխան հիմնարկների, մի քանի գրողների տուն-թանգարանների, Մատենադարանի, տարբեր հրատարակչությունների տնօրենների հետ, որոնք բարյացականորեն տվել են իրենց համաձայնությունը: Գիտխորհրդի անդամները միակար-

ծիք էին այն հարցում, որ մասնագիտական պրակտիկան անպայման շահեկան կլինի ուսանողների ապագա մասնագիտացումներում կողմնորոշվելու տեսակետից:

Ընթացիկ հարցերում

Լ Ս Ե Ց Ի Ն.- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր Մ. Ջանփոլադյանի «Թումանյանի աշխարհում» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ. Ժ. Քալանթարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ այդ գրքում ամփոփված հոդվածներն աչքի են ընկնում Թումանյան բանաստեղծի և թարգմանչի գեղարվեստական աշխարհը խորությամբ ներթափանցելու ունակությամբ: Գրքի մի շարք հոդվածներում լուսաբանվում են հայ-ռուսական և ռուս-հայկական գրական առնչությունների պատմությանը վերաբերող հարցեր: Գրքում ընդգրկված են ինչպես Թումանյանի երկերի ռուսերեն թարգմանությունների, այնպես էլ Պուշկինի ստեղծագործություններից Թումանյանի կատարած թարգմանությունների վերլուծություններ: Գիրքը կարող է հետաքրքրել բանասերներին, թումանյանագետներին, ընթերցող լայն շրջանակների:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- Գիրքը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն.- ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2018 թ. առկա ասպիրանտ **Աստղիկ Վալերիանի Սողոյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն.- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Մաֆարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը և Ս. Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվի առնելով ասպիրանտի գիտական նախասիրություններն ու գիտատեսական պատրաստվածության աստիճանը՝ նպատակահարմար է նրան առաջարկել հայ նոր գրականության հիմնադրի՝ Խաչատուր Աբովյանի պատումի արվեստի ուսումնասիրությունը: Թեմայի ընտրությունը նախ՝ պայմանավորված է նրանով, որ Խ. Աբովյանի մասին գիտական վերջին լրջմիտ խոսքը՝ մենագրության տեսքով, արդեն ունի տասնամյակների վաղեմություն, հետո՝ բավական բարդ և ուշարժան է այս հեղինակի

պատումի արվեստը, և գուցե հենց այս տեսակետից էլ այն երբեք չի դարձել առանձին ուսումնասիրության նյութ: Թեման միաժամանակ արդիական է, քանի որ պատումի վերլուծությունը նորօրյա գրականագիտության հիմնախնդիրներից է:

Նշվեց, որ նպատակահարմար է աշխատանքի գիտական ղեկավար առաջարկել պրոֆ. Ալ. Մակարյանին, որը տարիների ընթացքում Ա. Սողոյանին հատկացրել է հատուկ ուշադրություն, համատեղ հանդես եկել գիտական պարբերականներում: Ուրիշ խոսքով՝ հոգածությամբ աճեցրել է նրան՝ միաժամանակ ղեկավարելով թե՛ ավարտական աշխատանքը և թե՛ մագիստրոսական թեզը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- 1. ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ 2018 թ. առկա ասպիրանտ **Աստղիկ Վալերիանի Սողոյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «**Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը**»՝ Ժ 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտության գծով:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն.- Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Առլինա Սարգսյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Արդի հայ պատմավեպի պոետիկան»:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- Հաստատել.

1. **Առլինա Սարգսյանի** ատենախոսության թեման՝ «Արդի հայ պատմավեպի պոետիկան»՝ Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:
2. Գիտական ղեկավար՝ բան. գիտ. դոկտ., պրոֆ. Վազգեն Գաբրիելյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողներին անվանական կրթաթոշակ սահմանելու հարցը.

1. Պողոսյան Արշակ Անդրանիկի
2. Ճաղարյան Լուսինե Արթուրի
3. Ամիրջանյան Վահագն Սուրենի
4. Եղիազարյան Սամվել Վարդանի

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ա. Ավագյանը, Յու. Ս. Ավետիսյանը, Ս. Պ. Մուրադյանը և Ալ. Ա. Մակարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիշյալ ուսանողներին կրթաթոշակ սահմանել հետևյալ անվանակարգերում.

1. Պողոսյան Արշակ Անդրանիկի - «ԵՊՀ»
2. Ճաղարյան Լուսինե Արթուրի – «Ստեփան Ալաջաջյան»
3. Ամիրջանյան Վահագն Սուրենի – «Մեսրոպ Մաշտոց»
4. Եղիազարյան Սամվել Վարդանի – «Գրիգոր Նարեկացի»:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ